ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՄԾՁԲ-21-7/3-1

ք. Երևան «24».06.2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տեքստրլդ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Հարոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4 Ծառայության մատուցման արդյունքում ստացված ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան» բաժնի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ» ենթաբաժնում):

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 242280000 (երկու հարյուր քառասունչորս միլիոն երկու հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է

երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **10** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Տեքստորլդ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Ոիվնեցու 66
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2500000115940100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01000327
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Մ. ԱՎԱԳՅԱՆ	Լ. ՀԱՐՈՅԱՆ

Հավելված N 1
N ԲՄԾՁԲ-21-7/3-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1.2. Կոստյում ձմեռային դաշտային (լրակազմ) Ձմեռային կոստյումը բաղկացած է գլխանոցով բաճկոնից և անդրավարտիքից:

Բաճկոնի ներդիրը մշակվում է առնվազն 80 գրամ մակերեսային խտությամբ արհեստական կտորով, երկկողմանի մգդակարված 300 գրամ, իսկ թևքերի ներդիրը՝ նույնպես, առնվազն 80 գրամ մակերեսային խտությամբ արհեստական կտորով, երկկողմանի մգդակարված 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով, ընդ որում երեսացուի կտորին հպվող շերտերը՝ անջրաթափանց կտորից:

Բաճկոնի թիկունքամասը մշակված է վրակարված կոկետկայով: Զարդակարի լայնությունը 0,6 սմ: Առաջամասերում գոտկատեղի ներքև կարի եզրից 4-6սմ հեռավորության վրա մշակված են վրադիր կողային գրպաններ կափույրներով՝ կողից և վերևից մուտքերով: Կափույրները և վրադիր գրպանների եզրերը զարդակարված են 0,6սմ լայնությամբ: Կողքի զարդակարերը վրակարված են 0,1 սմ կարի լայնությամբ: Կափույրները կոճկվում են գաղտնի կոճկվածքով՝ 2 օղակ 14-16մմ տրամագծով կոճակով: Կափույրի լայնությունը 5,5-6 սմ, գրպանի լայնությունը 19,5-20,5սմ, երկարությունը կապուրի հետ միասին՝ 23-25 սմ, առանց կապուրի 20-22 սմ: Գրպանների երեսամասի կտորի հակառակ կողմից (ներսից) մշակվում է սև կամ մուգ գույնի, ոչ պակաս քան 140 գր մակերեսային խտության, ֆլիզե կամ համարժեք գործվացքից: Կպչուն ժապավենները պետք է լինեն պաշտպանական գույնի կամ շագանակագույն: Բաճկոնը ունի ներկարված թևքեր: Թևքերի վրա մշակված են վրադիր, կափույրով ծավալուն թեք գրպաններ, կափույրի լայնությունը 5,5-6 սմ, գրպանի լայնությունը 12,5-13 սմ, երկարությունը կապուրի հետ միասին՝ 14,5-15 սմ, առանց կապուրի 13-14սմ, կափույրները կոճկվում են 1,5-2,5սմ լայնությամբ կպչուն ժապավենով: Աջ և ձախ թևքերի ծավալուն վրադիր գրպանների կենտրոնում կարվում են 7,5 սմ տրամագծով կպչուն ժապավեններ: Թևքերի արմնկամասում մշակվում են լրացուցիչ կրկնակի զարդակարերով վրադիր արմնկակալներ:

Բաճկոնը կոճկվում է շղթայով և 6 հատ 17-20մմ տրամագծով կոճակօղակներով՝ մշակված գաղտնի եզրաշերտի վրա: Ուխակարից դեպի ներքը՝ 19.5-20.5սմ հեռավորության վրա՝ կրծքամասի աջ և ձախ մասերում կրծքանշանները փակցնելու համար, կարվում են 13,0 x 2,5 սմ չափսերի կպչուն ժապավեններ: Բաճկոնը ներսի կողմից գոտկատեղի ուղղությամբ մշակված է կարգավորող քուղ:

Բաճկոնի ուսամասերում մշակված են 4.7-4.9 սմ լայնության և առնվազն 12 սմ (կախված բաճկոնի չափսերից) երկարության ախլակներ, որոնք կոճկվում են 14-16 մմ տրամագծի կոճակներով: Ախլակների վրա պետք է տեղադրված լինի 6,9-7,1 սմ երկարությամբ և 4,9-5,1 սմ լայնությամբ երեսացուի գործվածքից հանովի օղագոտի:
Բաճկոնի և թևքերի ներքևի եզրերը ծալված են և վրակարված: Ծալման լայնությունը պատրաստի վիճակում՝ բաճկոնինը՝ 2-2,5սմ, իսկ թևքերինը՝ 1,5-2սմ: Թևքի ներքևի մասը ներսի կողմից մշակված է 9,5-10,5սմ (արտաքինից և ներքինից) երկարությամբ էլաստիկ երկշերտ տրիկոտաժե մանժետով (բազկակալով)՝ կողից բթամատի բացվածքով, տրիկոտաժե գործվածքի մակերեսային խտությունը առնվազն 500-600 գրամ:
Թևքերի բազկային հատվածում՝ ստորին եզրից 2.5-3.0 սմ բարձրության վրա մշակված են 5.0-5.5 սմ լայնությամբ՝ էլաստիկ ժապավենով ձգվող պատաներ, որոնք կոճկվում են մեկ փակօղակով և 2 հատ՝ իրարից 6.-7.0 սմ հեռավորության վրա կարված 14-16 մմ տրամագծով կոճակներով:

Վզատեղը մշակված է օձիքով: Օձիքը ունի կտրած կանգունակ: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Բաճկոնին կոճկվում է հանովի մորթե օձիք, որը կոճկվում է 5 օղակներով և բաճկոնի օձիքի հակառակ կողմից զուգահեռ կարված 5 հատ 14-16մմ տրամագծով կոճակներ: Օձիքը կոճկվում է բաճկոնին, լրացուցիչ շերտին մշակված 5 օղակներով և բաճկոնի վզատեղում զուգահեռ կարված 5 հատ 14-16մմ տրամագծով կոճակներով: Օձիքի մորթու մակերեսային խտությունը՝ առնվազն 800 գրամ, խավի բարձրությունը՝ 12մմ ոչ պակաս, գույնը՝ մոխրագույն: Մորթե օձիքի վզատեղի եզրը եզրակարված է երեսացուի կտորի եզրաշերտով:

Օձիքի հակառակ կողմում՝ ձախ մասում՝ լայնակի եզրից 3-4 սմ հեռավորության վրա, մշակված է 2.5-3 սմ լայնության և 12-15 սմ երկարության պատա՝ կոճկված 14-16 մմ տրամագծի կոճակով, իսկ հակադիր կողմում՝ լայնակի եզրից 3.0-4.0 սմ հեռավորության վրա մշակված է 14-16 մմ տրամագծի կոճակ:
Բաճկոնին միացված է անջրաթափանց արհեստական գործվածքից գլխանոց: Բաճկոնի աստառի աջ կրծքամասում մշակված է ծոցագրպան՝ շերտիկով, որը կոճկվում է մեկ օղակով և կոճակով:

Անդրավարտիք

Մշակված է ետնամսում՝ 11-12սմ, իսկ առաջամասում 7,5-8,5 սմ լայնության գոտիով, զարդակարված շեղանկյուն ձևով: Առաջամասում կողքից, թեք ներկարված գրպաններ՝ 17-18սմ երկարությամբ բացվածքով: Կողքերից մշակված են կափույրով ծավալուն, դեպի դուրս եռածալ վրադիր գրպաններ: Կափույրների առաջամասը ֆիքսված է ամրակարով, իսկ հետնամասից կոճկվում է 2,5x2,5սմ չափսի կպչուն ժապավենով: Գրպանի լայնությունը 20-21 սմ, երկարությունը 23-24 սմ, եռածալ, ծալքերի լայնությունը միմյանց հավասար լայնությամբ, կափույրի լայնությունը 5,5-6,0 սմ, ծալքերը վերևից և ներքևից 3,0-3,5 սմ ամրակարված: Գրպանի վերնամասը (մուտքը) մշակված է 1 սմ լայնությամբ զարդակարով:

Գոտու վրա տեղադրված են 5 կամրջակներ, ընդ որում մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետնամասի կարի վրա: Տաբատի առաջամասում՝ կողային կարերի միջև ընկած ամբողջ լայնությամբ և 23-27 սմ երկարությամբ մշակված են ծնկակալեր: Անդրավարտիքը կոճկվում է գաղտնի կոճկվածքով, /գուլֆիկով/ 3 հատ 14-16մմ տրամագծով օղակ կոճակներով և 2 հատ 14-16մմ տրամագծով օղակ կոճակներով, որոնք մշակված են գոտու վրա են: Անդրավարտիքը ներքնամասում կապվում է կապիչներով:

Անդրավարտիքի ներդիրը մշակվում է ստորին եզրից 15 սմ բարձրության վրա, առնվազն 80 գրամ մակերեսային խտությամբ երկկողմանի մգդակարված 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով, ընդ որում երեսացուի կտորին հպվող շերտը՝ անջրաթափանց :

Համազգեստի բոլոր կոճակները պետք է լինեն՝ պատրաստված ջերմակայուն (չհալվող) նյութից, չորս կարանցքերով, եզրերը թեք անկյան տակ երկկողմանի հղկված, երկողմանի կարվող, պաշտպանական գույնի:

Բաճկոնի աստառացուի ձախակողմյան փեշի ներքին եզրից 7-10,5 սմ բարձրության վրա կողակարին կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ, որի վրա պետք է նշված լինի տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը:

Փաթեթավորումը՝ հակերով, մեկ հակի մեջ 2 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1լրակազմ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող և մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Պատվիրատուի կողմից տրամադրվում է երեսացուի գործվածքը՝ մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ: Ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն կտորի ծախսի և մնացորդների վերաբերյալ: Մնացած բոլոր պարամետրերի շեղումները ըստ տեխնիկական պայմանի :

Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պարտավոր է իր ֆինանսական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում հավաստագրված, արտոնագրված կամ անհրաժեշտության դեպքում էտալոնային փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված ներդիրի՝ սինտեպոնի և արհեստական կտորի, բազկակալի, օձիքի մորթու մակերեսային խտության և մորթու խավի բարձրության վերաբերյալ եզրակացություն:Ընդ որում նմուշառումը պետք է կատարվի ընդունող ստորաբաժանում մատակարարված խմբաքանակից՝ լաբորատորիայի կողմից գործուղված համապատասխան մասնագետի մասնակցությամբ:

Չափս-հասակային սանդղակ

Կրծքավանդակի շրջագիծ / Հասակը	44	46	48	50	52	54	56	58	60	62	64	Ընդամենը %
2	1,5	3,0	2,5	1,0								8
3	4,5	8,0	15,0	9,0	4,0	2,2	2,3	0,7	0,2			45,9
4	2,0	5,0	6,3	5,3	3,3	3,8	3,4	2,2	0,6	0,4	0,4	32,7
5	0,5	1,0	2,0	1,5	2,0	1,3	1,3	1,2	0,5	0,3	0,3	11,9
6			0,2	0,2	0,2	0,2	0,2	0,2	0,1	0,1	0,1	1,5
Ընդամենը %	8,5	17,0	26,0	17,0	9,5	7,5	7,2	4,3	1,4	0,8	0,8	100,0

Վճարովի ծառայությունների համար պատվիրատուի կողմից ըստ ապրանքատեսակների տրամադրվող նյութերի.

ՑԱՆԿ

1.	Ապրանքատեսակը	Տրամադրվող նյութերը	Ծախսը մեկ միավորի համար
	Կոստյում ձմեռային դաշտային	Երեսացուի գործվածք	1,5 լայնքով 4.07 գ/մ կամ 6.105մ²

Ծանոթություն.

1.Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը ներկայացնի.

1.1Մեկ օրինակ նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու համար:Հաստատված նմուշն հանդիսանում է պայմանագրով սահմանված քանակի մաս և ենթակա է մուտքագրման՝ վերջին խմբաքանակը ներկայացնելիս:

1.2.Նմուշի հետ համատեղ՝ մատակարար կազմակերպությունն պարտավոր է ներկայացնել արտադրման համար օգտագործված բոլոր նյութերն՝ ամրացված գծագրական թղթի վրա: Ներկայացված նմուշն ստորագրում է մատակարարը, համաձայնեցվում է ՀՀ ՋՈՒ ԹՎ իրային ծառայության պետի հետ և հաստատվում կամ մերժվում է ՀՀ ՋՈՒ թիկունքի պետ- վարչության պետի կողմից, ներկայացնելուց ոչ ուշ քան երեք աշխատանքային օրվա ընթացքում:

2. Մատակարարվող ապրանքատեսականին պետք է լինի նոր և չօգտագործված

3. Մատակարարվող ապրանքատեսականու չափս-հասակային տվյալները՝ անկախ մատակարարման խմբաքանակից, պետք է համապատասխանի չափս-հասակային սանդղակի առնվազն 50%-ին:

4. Մատակարարվող ապրանքատեսակը պետք է համապատասխանի տեխնիկական բնութագրի և մատակարար կազմակերպության կողմից նախօրոք ներկայացված տեխնիկական պայմանի պահանջներին, որը համաձայնեցվում է պատասխանատու ստորաբաժանման հետ:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի							
չ/հ	անվանումը	չ/մ	քանակը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Ծառայությունների մատուցումը 2021թ.	
						3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ ոչ ուշ քան հոկտեմբերի 31-ը
1	դերձակի ծառայություններ/Կոստյում ձմեռային, դաշտային/	լ-կ	10000	11988	119880000	6000	4000
2	դերձակի ծառայություններ/Կոստյում ձմեռային, դաշտային/	լ-կ	10000	12240	122400000	6000	4000

Նանոթություն՝ - Յուրաքանչյուր տողը ընդունել, որպես առանձին չափաբաժին:

- Մատուցման արդյունքում արտադրված ապրանքատեսակները պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ կենտրոնական իրային բազա (ք. Երևան, Արցախի 61) մատակարար կազմակերպության միջոցով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի
տեղակալ՝

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Տեքստորլդ» ՍՊԸ
Տնօրեն՝

Լ. ՀԱՐՈՅԱՆ

Հավելված N 2
N ԲՄԾՁԲ-21-7/3-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման ենթակա ծառայության անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2021թ. պետական բյուջեից ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ, ընդ որում՝	
			3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	դերձակի ծառայություններ/Կոստյում ձմեռային, դաշտային/	98391120/21	71928000	119880000
2	դերձակի ծառայություններ/Կոստյում ձմեռային, դաշտային/	98391120/22	73440000	122400000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի
տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Տեքստորլդ» ՍՊԸ
Տնօրեն՝

Լ. ՀԱՐՈՅԱՆ

Հավելված N 3
N ԲՄԾՁԲ-21-7/3-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դրուս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԲՄԾՁԲ-21-7/3-1 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն